

Պատական Գործ N: ԱՎԴ/0025/02/11

Հայցադիմումը /դիմումը/ ստացվել է:	24-01-2011
<b>Հայցվոր/դիմող</b>	
Անուն:	<<Ղ-Տելեկոմ>> ՓԲԸ
Հասցե:	ք.Երևան, Արգիշտի 4/1
Տիպ:	Առևտրային /ԲԲԸ, ՓԲԸ, ՍՊԸ, Ա/Կ եվ այլն/
<b>Ներկայացուցիչ</b>	
Անուն	Արթուր
Ազգանուն	Ղամբարյան
Հասցե	ք.Երևան, Արգիշտի 4/1
Սեռ	Արական
<b>Պատասխանող</b>	
Անուն:	<<<< Արարատի մարզպետարանի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկ
Հասցե:	ք.Արտաշատ, Օգոստոսի 23-ի, շենք 60
Տիպ:	ՏԻՄ /Տեղական ինքնակառավարման մարմիններ՝ քաղաքապետարաններ, մարզպետարաններ, գյուղապետարաններ/
Ինքնուրույն պահանջ ներկայացնող:	
<b>3-րդ անձ</b>	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Պահանջ:	Գումարի բռնագանձման պահանջի մասին:
Հիմնական պահանջի վիճակագրության տողի համարը:	11.1
Պատասխանի ստացման ամսաթիվը:	09-06-2011
Լրացուցիչ պահանջի վիճակագրության տողի համարը:	
Ստացման կարգը:	Առաջին անգամ
Այլ նշումներ:	
Անդորրագրի ներկայացման ամսաթիվ:	24-01-2011
Պետ. տուրք (<< դրամ):	28584

<b>Այլ նշումներ:</b>	
<b>Ամսաթիվ:</b>	24-01-2011
<b>Նախագահող դատավոր</b>	
Դատարանի անվանում:	Արարատի և Վայոց Ձորի մարզ
Դատավորի անուն:	Հարություն Վոլոդյայի Ենոքյան
<b>Դատավոր</b>	
Դատարանի անվանում:	Արարատի և Վայոց Ձորի մարզ
Դատավորի անուն:	
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Որոշման ամսաթիվ:</b>	24-01-2011
<b>Ներկայացվել է միջնորդություն:</b>	Ապահովում կիրառելու
<b>Բավ/մերժ:</b>	Մերժվել է
<b>Որոշման ամսաթիվ:</b>	24-01-2011
<b>Տրվել է կատարողական թերթ:</b>	
<b>Հայցի ապահովման միջոցները:</b>	Գույքի դրամական միջոցների վրա արգելանք դնելը
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Դատաքննության ամսաթիվ:</b>	23-02-2011
<b>Ծանուցագիրը ուղարկվել է:</b>	27-01-2011
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Ժամ:</b>	11:00
<b>Նիստերի դահլիճի համար:</b>	3
<b>Դատաքննության ամսաթիվ:</b>	02-03-2011
<b>Ծանուցագիրը ուղարկվել է:</b>	23-02-2011
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Ժամ:</b>	11:30
<b>Նիստերի դահլիճի համար:</b>	3
<b>Դատաքննության ամսաթիվ:</b>	24-03-2011
<b>Ծանուցագիրը ուղարկվել է:</b>	11-03-2011
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Ժամ:</b>	12:00
<b>Նիստերի դահլիճի համար:</b>	3

Դատաքննության ամսաթիվ:	29-04-2011
Ծանուցագիրը ուղարկվել է:	06-04-2011
Այլ նշումներ:	
Ժամ:	11:00
Նիստերի դահլիճի համար:	3
Դատաքննության ամսաթիվ:	13-05-2011
Ծանուցագիրը ուղարկվել է:	29-04-2011
Այլ նշումներ:	
Ժամ:	11:30
Նիստերի դահլիճի համար:	3
Դատաքննության ամսաթիվ:	01-06-2011
Ծանուցագիրը ուղարկվել է:	13-05-2011
Այլ նշումներ:	
Ժամ:	11:30
Նիստերի դահլիճի համար:	3
Դատաքննության ամսաթիվ:	21-06-2011
Ծանուցագիրը ուղարկվել է:	08-06-2011
Այլ նշումներ:	
Ժամ:	12:15
Նիստերի դահլիճի համար:	3
Դատաքննության ամսաթիվ:	06-07-2011
Ծանուցագիրը ուղարկվել է:	21-06-2011
Այլ նշումներ:	
Ժամ:	15:00
Նիստերի դահլիճի համար:	3
Ամսաթիվ:	06-07-2011
Հոդված	
Հոդված	ՀՀ քաղ. դատ. օր. 32-րդ Մաս 1-ին
Հոդված	
Հոդված	ՀՀ քաղ. դատ. օր. 109-րդ Կետ 6-րդ
Հոդված	
Հոդված	ՀՀ քաղ. դատ. օր. 130-132-րդ

Կարճման հիմքը:

Հայցվորը հրաժարվել է հայցից

Պատական ակտ (վճիռ, որոշում):

թիվ ԱՎԴ/0025/02/11

ՎՃԻՌ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

06.07.2011թվական ք.Արտաշատ

ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի  
ընդհանուր իրավասության դատարանը

Նախագահությամբ՝  
դատավոր՝ Հ.Ենոքյանի  
քարտուղարությամբ՝ Հ.Հովսեփյանի  
մասնակցությամբ՝  
հայցվորի լիազոր ներկայացուցիչ՝ Է.Շիրինյանի  
/անձն. AF 0234544, տրված՝  
01.02.2001թ. 005-ից/  
Ս.Բաղիրյանի  
/անձն. AK 0244840, տրված՝  
16.02.2009թ. 011-ից/  
պատասխանողի լիազոր ներկայացուցիչ՝  
Վ.Գրիգորյանի

դռնբաց դատական նիստում, քննելով  
քաղաքացիական գործն ըստ հայցի «Ղ-  
Տելեկոմի» ՓԲԸ-ի ընդդեմ «ՀՀ Արարատի  
մարզպետարանի աշխատակազմ» պետական  
կառավարչական հիմնարկի, ՀՀ ֆինանսների  
նախարարության՝ 1.429.167 /մեկ միլիոն չորս  
հարյուր քսանհինգ հազար հարյուր վաթսուներեք/  
ՀՀ դրամ պարտքի գումարի և 28.584 /քսանութ  
հազար հինգ հարյուր ութսունչորս/ ՀՀ դրամ  
նախապես վճարված պետական տուրքի  
գումար, ընդամենը՝ 1.457.751 /մեկ միլիոն չորս  
հարյուր հիսունյոթ հազար յոթ հարյուր  
հիսունմեկ/ ՀՀ դրամ գումար բռնագանձելու  
պահանջների մասին՝

ՊԱՐՁԵՑ՝

1.Գործի դատավարական  
նախապատմությունը.  
24.01.2011թվականին հայցվորը դիմել է  
Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր  
իրավասության դատարան:  
24.01.2011թվականին Արարատի և Վայոց ձորի  
մարզերի ընդհանուր իրավասության

դատարանի կողմից հայցն ընդունվել է վարույթ: 18.02.2011թվականին պատասխանող «ՀՀ Արարատի մարզպետարանի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը հայցադիմումի դեմ պատասխան է ներկայացրել՝ առարկելով հայցապահանջի դեմ: 29.04.2011 թվականին հայցվորը դիմում է ներկայացրել Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարան հայցի առարկան փոխելու մասին: 04.05.2011 թվականին Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանը սույն գործով որպես պատասխանող է ներգրավել նաև ՀՀ ֆինանսների նախարարությանը: 12.05.2011 թվականին պատասխանող «ՀՀ Արարատի մարզպետարանի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը կրկին հայցադիմումի դեմ պատասխան է ներկայացրել՝ առարկելով հայցապահանջի դեմ: 09.06.2011 թվականին պատասխանող ՀՀ ֆինանսների նախարարությունը հայցադիմումի դեմ պատասխան է ներկայացրել՝ ամբողջության առարկելով հայցապահանջի դեմ: 21.06.2011 թվականին հայցվորի ներկայացուցիչը դիմում է ներկայացրել դատարան հայցից հրաժարվելու վերաբերյալ:

## 2. Հայցվորի դիրքորոշումը.

Դիմելով դատարան հայցվորը հայտնել է, որ «Ղ-Տելեկոմի» ՓԲԸ-ն հանդիսանում է շարժական կապի օպերատոր: Հայցվորը 10.07.2005 թվականին կատարել է հրապարակային հրավեր՝ օֆերտա, ապառիկ հիմունքով շարժական կապի ծառայություններից օգտվելու օֆերտա ներկայացնելու վերաբերյալ: 14.03.2007թվականին «ՀՀ Արարատի մարզպետարանի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը (այսուհետ՝ «Պատասխանող»), լրացնելով հայտի ձևը, ակցեպտավորել է հայցվորի կողմից ներկայացված օֆերտան և պատասխանողին տրվել է բջջային հեռախոսակապի համապատասխան թվով SIM քարտ: Ըստ ծառայությունների մատուցման պայմանների (ստորև՝ «Պայմանագիր») 6.7.4 կետի՝ պատասխանողը պարտավոր էր յուրաքանչյուր ամսվա հաշիվը մարել մինչև հաջորդ ամսվա 15-րդ օրը: Սակայն պատասխանողը, խախտելով նշված պարտավորությունը, չի վճարել մատուցված ծառայությունների դիմաց: Համաձայն հայցվորի և պատասխանողի միջև եղած պայմանագրի 6.7.11 կետի հայցվորը դադարեցրել է պատասխանողի քարտերի սպասարկումը: Ելնելով վերը նշվածից՝ հայցվորը դատարանից

խնդրել է «ՀՀ Արարատի մարզպետարանի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկից հոգուտ «Ղ-Տելեկոմի» ՓԲԸ-ի բռնագանձել 1.429.167 /մեկ միլիոն չորս հարյուր քսանինը հազար հարյուր վաթսունյոթ/ ՀՀ դրամ պարտքի գումարի և 28.584 /քսանութ հազար հինգ հարյուր ութսունչորս/ ՀՀ դրամ նախապես վճարված պետական տուրքի գումար, ընդամենը՝ 1.457.751 /մեկ միլիոն չորս հարյուր հիսունյոթ հազար յոթ հարյուր հիսունմեկ/ ՀՀ դրամ գումար:

29.04.2011 թվականին հայցվորը դիմում է ներկայացրել Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարան հայցի առարկան փոխելու մասին, ըստ որի ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ, 305-րդ, 448-րդ, 449-րդ, 777-րդ, 1092-րդ, 1095-րդ հոդվածներով, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 12-րդ մասով՝ դատարանից խնդրել է կիրառել օրենքի պահանջներին չհամապատասխանող պայմանագրի անվավերության հետևանքներ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մատուցված ծառայությունները բնեղենով վերադարձնելն անհնար է՝ հայցվորը դատարանից խնդրել է պարտավորեցնել պատասխանողին հատուցել մատուցված ծառայությունների արժեքը՝ այն է 1.429.167 ՀՀ դրամ:

Մինչև գործի դատաքննության ավարտը հայցվորը միջնորդություն է ներկայացրել դատարան, որով հայտնել է, որ հայցվորը հրաժարվում են հայցից ամբողջությամբ և խնդրել է գործը կարճել:

3.Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը.

21.06.2011 թվականին հայցվորի կողմից ներկայացված միջնորդությունը հայցից հրաժարվելու վերաբերյալ:

4.Դատարանի իրավական վերլուծությունները. Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 32-րդ հոդվածի 1-ին մասի՝ «--Հայցվորը հայցից կարող է հրաժարվել առաջին ատյանի դատարանում մինչև դատաքննության ավարտը»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ «Դատարանը կարճում է գործի վարույթը, եթե հայցվորը հրաժարվել է հայցից»: Դատարանը, նկատի ունենալով, որ մինչև դատաքննության ավարտը հայցվորի կողմից ներկայացվել է միջնորդություն հայցից հրաժարվելու վերաբերյալ, գտնում է, որ գործի վարույթը ենթակա է կարճման: Առաջնորդվելով վերոգրյալ

պատճառաբանությամբ և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 32-րդ հոդվածի 1-ին մասով, 109-րդ հոդվածի 6-րդ կետով և 130-132-րդ հոդվածներով՝ դատարանը

ՎՃՌԵՑ՝

Քաղաքացիական գործի վարույթն ըստ հայցի «Ղ-Տելեկոմի» ՓԲԸ-ի ընդդեմ «ՀՀ Արարատի մարզպետարանի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի, ՀՀ ֆինանսների նախարարության՝ 1.429.167 /մեկ միլիոն չորս հարյուր քսանհինգ հազար հարյուր վաթսուներեք/ ՀՀ դրամ պարտքի գումարի և 28.584 /քսանութ հազար հինգ հարյուր ութսունչորս/ ՀՀ դրամ նախապես վճարված պետական տուրքի գումար, ընդամենը՝ 1.457.751 /մեկ միլիոն չորս հարյուր հիսուներեք հազար յոթ հարյուր հիսունմեկ/ ՀՀ դրամ գումար բռնագանձելու պահանջների մասին կարճել:  
Պետական տուրքի հարցը համարել լուծված:  
Վճիռը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:  
Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Դատավոր՝ Հ.Ենոքյան

Դատական ակտի ամսաթիվը:	06-07-2011
Ակտով հօգուտ պետ. բյուջեի բռնագանձման ենթակա պետ. տուրքի չափը (ՀՀ դրամ):	0
Ամսաթիվ:	08-08-2011
Այլ նշումներ:	
Գործը, որոշումը հանձնվել է գրասենյակ:	12-08-2011
Էջերի քանակը:	120, 111, 32
Գործին կից նյութեր:	
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	16-08-2011
Էջերի քանակը:	120, 111, 32

Գործին կից նյութերը:

Այլ նշումներ:

Փաստաթուղթը տպվել է [www.datalex.am](http://www.datalex.am) պորտալի կողմից 19 Հունիս 2014